Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 հունիսի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բադալյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Լ. Գալֆայանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Գեղարքունիք համայնքի N 2 ջրամբարի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի հունիսի 20-ին, ժամը 16:00-ին:

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիում	ք. Երևան, Արմենակյան 125 043 040804 ք. Երևան, Արմենակյան 125/3	jhhi@jhhi.am info@shushi-tech.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 5 000 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**				

Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Գեղարքունիք համայնքի N 2 ջրամբարի վերականգնում				
1	«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիում	4 100 000	820 000	4 920 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից «Ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ մասնակցի հայտով չեն ներկայացվել.

- հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն հավելված N 3-ի,
- հայտով առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին՝ բնօրինակից արտատպված:

Համաձայն ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ գնահատող հանձնաժողովը 26.06.2024թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիումին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը (27.06.2024թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերով մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակցի հայտով (այդ թվում շտկմամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիումին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետը կիրառելի չէ:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/6-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիումին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Լ. Գալֆայան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան